«Գիրք պատմութեանց»-ում հիշատակվում են նաև՝ «***խնդրանաց թուղթ***» (էջ 200), «***թուղթս բարեխոսութեան***» (էջ 306), «***բանս սպառնականս և յանդիմանութեան***» (էջ 230), «***սիրոյ նամակ***», «***գիր պատգամաց***» (էջ 133) և այլ ներժանրային կառույցներ:

Առանձին խումբ են կազմում մոտ երկու տասնյակի հասնող տարաբնույթ ***հրովարտակները,*** որոնք հիմնականում Շահ-Աբասի ու նրա հաջորդների անունից են: Դրանք երբեմն հիշատակվում են իրենց հունարեն փոփոխակով՝ «նոմոս»: Հրովարտակներն իրենց կառուցվածքով ու բովանդակությամբ ավելի կանոնիկ են ու ավելի համահավաք, ըստ ամենայնի՝ վկայաբերված են հնարավոր ամբողջականությամբ: Հրովարտակներն սկսվում են «***Հրաման է***» միավորով, որին հաջորդում է հրամանն արձակողի կամ հրովարտակի հեղինակի բնութագիրը, որ գովաբանական-փառաբանական բնույթի միավոր է, ինչպես՝ «մէծ արքայէն Շահաբասայ» (էջ 75), կամ՝ «ի հզօր և խաղաղասէր և յաշխարհաշէն թագաւորէն Շահաբասայ» (էջ 129) և այլն, այնուհետև հաջորդում է հրովարտակի բուն մասը՝ հրամանը կամ հայտարարությունը, և, սովորաբար, հրովարտակն ավարտվում է պայմանի, խոստումի, հաճախ նաև՝ սպառնալիքի ամրագրմամբ:

Միշտ չէ, սակայն, որ Դավրիժեցին ուղղակի է ներբերում հրովարտակները: Կան նաև այնպիսիք, որոնք բերված են անուղղակիորեն և պարագրկում են հրովարտակի ընդհանուր բովանդակությունը: Բնականաբար, այսպիսի դեպքերում ներտեքստային միավորները միշտ չէ, որ պահպանվում են, պատմիչի համար կարևորը բովանդակության փոխանցումն է: Գրեթե բացակայում են գովաբանական-փառաբանական բնույթի միավորները (տե՛ս, օրինակ, էջ 90, 177, 249, 348 և այլն): Սա նաև հոգեբանական պատճառաբանվածություն ունի և բացատրելի է Դավրիժեցու հայրենասիրությամբ: Եթե հրովարտակն ուղղակի ներբերելիս Շահ-Աբասին «հզոր», «խաղաղասեր» և «աշխարհաշեն» որակումները